ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԾՁԲ-21-10/12-1

ք. Երևան «20» հուլիսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, որը գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջերմգազշին» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վ. Քոչունցի, որը գործում է «Ջերմգազշին» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման, փորձարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **10,000,000** (տասը միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի **24**-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն Կատարողի առաջարկած հանրագումարային գինն է, որը կազմում է **2,329,398** (երկու միլիոն երեք հարյուր քսանինը հազար երեք հարյուր իննսունութ) ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայությունների մատուցման համար սահմանված առավելագույն միավոր նախահաշվային գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավոր նախահաշվային գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ** վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ջերմգազշին» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 5-րդ նրբ. 1/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1570004466230100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01236906
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
_____ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ	_____ Վ. ՔՈՉՈՒՆՑ

Հավելված N 1
ԳՀՄՁԲ-21-10/12-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
(ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ)

Ծառայության							
Հ/հ	Անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	Գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման, փորձարկման ծառայություններ	ՊՆ զորամասերի ճնշման կարգավորիչ կետերի գազային սարքերի, սարքավորումների վերանորոգում, կարգաբերում, ստուգաչափում և սպասարկում	Դրամ	**10,000,000**	**1**	ՀՀ ՊՆ զորամասեր	3-րդ և 4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ, քան 20.12.2021թ.

ԳԱԶԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ			
Հ/հ	Անվանումները	Չափման միավորը	Միավոր նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Հոսքային ջրաջեռուցիչի տեղադրում, վառելիքը գազ /առանց նյութերի արժեքի/	հատ	8,092
2	Ծավալային ջրաջեռուցիչի տեղադրում, վառելիքը գազ /առանց նյութերի արժեքի/	հատ	13,085
3	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 5խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	11,364
4	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 10խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	14,438
5	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 30խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	18,074
6	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 50խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	23,706
7	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 80խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	28,067
8	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 120խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	32,419
9	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 180խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	38,326
10	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 250խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	44,228
11	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 350խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	51,149
12	Գազայրիչային սարքի տեղադրում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 500խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	61,392
13	Գազայրիչների բլոկի տեղադրում, արտադրողականությունը մինչև 15խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	13,511
14	Գազայրիչների բլոկի տեղադրում, արտադրողականությունը մինչև 30խմ/ժ /առանց նյութերի արժեքի/	հատ	15,924

15	Գազի ճնշման փոփոխման սարքավորման /պահարանային կայանք/ տեղադրում /առանց սարքավորման արժեքի/	հատ	29,933
16	Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	10,747
17	Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում, տրամագիծը մինչև 100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	18,949
18	Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում, տրամագիծը մինչև 200մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	38,970
19	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	5,310
20	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 80մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	10,049
21	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11,910
22	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 200մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	25,469
23	Ապահովիչ կափույրի տեղադրում, տրամագիծը մինչև 300մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	43,340
24	Հակապայթուն կափույրի տեղադրում, մակերեսը մինչև 0,1 քմ /առանց նյութերի արժեքի/	հատ	18,451
25	Հակապայթուն կափույրի տեղադրում, մակերեսը մինչև 0,2 քմ /առանց նյութերի արժեքի/	հատ	22,975
26	Հակապայթուն կափույրի տեղադրում, մակերեսը մինչև 0,25 քմ /առանց նյութերի արժեքի/	հատ	25,628
27	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 80 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	8,353
28	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 100 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	9,894
29	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 150 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	14,262
30	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 200 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	20,312
31	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 250 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	28,556
32	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 300 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	32,256
33	Խցավոր /թաղանթային/ ճնշման կարգավորիչ կափյուրի տեղադրում տրամագիծը մինչև 400 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	37,456
34	Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 80 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	11,351
35	Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 100 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	12,764
36	Գազի զտիչի /մեխանիկական խառնուկներից/ տեղադրում տրամագիծը մինչև 200 մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	24,560
37	Միացում գազատար խողովակին խողովակապտուկով Φ15մմ-ոց փականի տեղադրումով /առանց նյութերի արժեքի/	հատ	1,537
38	Միացում կրակախցին խողովակապտուկով Φ15մմ-ոց գազի ծորակի տեղադրումով /առանց նյութերի արժեքի/	հատ	2,432
39	Այլ սարքերի և սարքավորումների տեղադրում, խողովակի օդային գլխանցքի վրա /առանց սարքի արժեքի/	հատ	1,184
40	Հսկիչ-ստուգիչ վահանակի տեղադրում չափսերը, մինչև 400x300մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	4,873
41	Հսկիչ-ստուգիչ վահանակի տեղադրում չափսերը, մինչև 700x600մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	10,282
42	Հսկիչ-ստուգիչ վահանակի տեղադրում չափսերը, մինչև 1200x900մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	12,456
43	Կրակապաշտպան վահանների /թիթեղների/ տեղադրում /առանց նյութերի արժեքի/	մ²	528
44	Գազամուղի պնեվմոտիկ փորձարկում	100մ	71,314
45	Գործող գազատարի կտրում տրամագիծը մինչև 50մմ	տեղ	19,560
46	Գործող գազատարի կտրում տրամագիծը մինչև 100մմ	տեղ	35,352
47	Գազի գնդիկավոր, կոնաձև խցանավոր փականի տեղադրում, տրամագիծը 15-50մմ /առանց փականի արժեքի/	հատ	3,233
48	Պողպատե սողնակի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	2,228
49	Պողպատե սողնակի տեղադրում, տրամագիծը 65,80,100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	4,030
50	Պողպատե սողնակի տեղադրում, տրամագիծը 125,150մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	8,476
51	Սողնակային փականի տեղադրում, տրամագիծը մինչև 50մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	3,233
52	Սողնակային փականի տեղադրում, տրամագիծը մինչև 65,80,100մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	5,905
53	Սողնակային փականի տեղադրում, տրամագիծը մինչև 125,150մմ /առանց նյութերի արժեքի/	հատ	12,320
54	Գազայրիչային սարքի ապամոնտաժում մեկ գազայրիչով, արտադրողականությունը մինչև 120խմ/ժ (բոլոր սարք սարքավորումների ապամոնտաժում /կազմաքանդում/ կիրառել մոնտաժմանը 0,4 գործակցով, գ=0,4, /մոնտաժում*0,4=/)	հատ	12,967
55	Վերանորոգման բրիգադի, նյութերի և գործիքների տեղափոխում ավտոտրանսպորտով 5-30 կմ-ի համար /ներառյալ վերադարձը/	կր	7,100

56	Ամեն հաջորդ 1 կմ-ի համար ավելացնել	լր	71
57	Գազի ճնշման կարգավորիչ կետի սարքավորումների տեխնիկական վիճակի գնում, սպասարկում, վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	135,000
58	Գազի ճնշման կարգավորիչ կետի 50 մմ տրամաչափի РДУК տիպի ճնշման կարգավորիչ տեղադրում (նյութի արժեքով)	լր	216,000
59	Գազի ճնշման կարգավորիչ կետի 100 մմ տրամաչափի РДУК տիպի ճնշման կարգավորիչ տեղադրում (նյութի արժեքով)	լր	269,400
60	Գազի ճնշման կարգավորիչ կետի ճնշման կարգավորիչի հրամայող սարքի (пилот) տեղադրում (նյութի արժեքով)	լր	61,750
61	Գազի ճնշման կարգավորիչի /ГРУ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	85,000
62	Գազի ապահովիչ կափույրի /ГРУ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	45,000
63	Գազի զտիչի /ГРУ/ մաքրում և վերանորոգում	լր	20,000
64	Ճնշման կարգավորիչի հրահանգիչի /ГРУ/ վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	15,000
65	Սողնակային փականի վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	10,000
66	Գազի խցանային փականի վերանորոգում և կարգաբերում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	3,500
67	Իմպուլսային գծերի փչամաքրում	հատ	1,500
68	G2.5, G4, G6 տիպի գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	26,000
69	G10 G16 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	47,500
70	G25B Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	հատ	53,500
71	G 25A Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	71,000
72	G 40 տիպի Elcor-M և Elcor-MU արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	70,500
73	G 65 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	84,500
74	G 100« G160 Elcor-M և Elcor-MU տիպի արդյունաբերական գազի մեմբրանային հաշվիչների ստուգաչափման անցկացման և վերանորոգման աշխատանքներ /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	93,500
75	Elcor-M/MU էլեկտրոնային ճշտիչի վերանորոգում /առանց սարքի և նյութերի արժեքի/	լր	89,000
	ԸՆԴԱՄԵՆԸ		**2,452,001**

Ծանոթություն.

1. Ծառայություններն իրականացվելու են ՀՀ ողջ տարածքում (ՊՆ զորամասերում), նախատեսված առավելագույն գնի սահմաններում՝ համաձայն հաստատված թերությունների ակտերի և գնման ժամանակացույց-օրացուցային գրաֆիկի:

2. Ծառայությունների բացակայության դեպքում դրանց արժեքը հաշվարկվում է ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգով, կիրառելով 2020թ.-ի թիվ 11 տեղեկագրի վերահաշվարկի և ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

3. Նյութերի, պատրաստվածքների և սարքավորումների գները փոխհատուցվում են ըստ 2020թ.-ի թիվ 11 ինֆորմացիոն տեղեկագրի և/կամ 04.10.2016թ. ՀՀ հարկային օրենսգրքի 55-րդ՝ «Հաշվարկային փաստաթուղթը և դրա կազմումը» հոդվածի 2-րդ մասով նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերով՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ կիրառելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետում բերված բանաձևով ստացված գործակիցը:

4. Նյութերը, պատրաստվածքներն ու սարքավորումները ձեռք են բերվում Կատարողի կողմից՝ բացառապես վերանորոգման և սպասարկման աշխատանքներում օգտագործելու համար՝ ըստ շինարարական նորմերի չափորոշիչների:

5. Նյութերի, պատրաստվածքների, սարքավորումների վրա պետք է կիրառել տրանսպորտային (նյութերի տեղափոխման) ծախսերի մարզային գործակիցները՝ ըստ ՀՀ կառավարության 23.06.2011թ. N 879-Ն որոշմամբ հաստատված կարգի:

6. Սույն ծառայությունների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ծառայություններն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ջերմգազշին» ՍՊԸ տնօրեն

Ա. ՔՈՉՈՒՆՑ

Հավելված N 2
ԳՀԾՁԲ-21-10/12-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝	
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	50531151/1	Գազասարքավորումների վերանորոգման, կարգաբերման, փորձարկման ծառայություններ	**5,000,000**	**10,000,000**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԿՀԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ջերմգազշին» ՍՊԸ տնօրեն

Վ. ՔՈՉՈՒՆՑ

Հավելված N 3
ԳՀԾՁԲ-21-10/12-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրտս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
ԳՀԾՁԲ-21-10/12-1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն